

# Ստեղծագործական մտածողության զարգացումը առակի ուսուցման դասերին

*Մելքոնյան Ռոզա*

**Հանգուցային բառեր.** տարրական դասարաններ, աշակերտ, ժողովրդական ստեղծագործություն, գործուն ընթերցանության ուղեցույց, խճանկար

Տարրական դասարանների աշակերտներն օժտված են բացառիկ ստեղծագործական մտածողությամբ, այդ պատճառով էլ նրանց համար նախատեսված «Մայրենիի» դասագրքերի հիմնական բովանդակությունը հրաշապատումային է՝ ներկայացված գունագեղ նկարազարդումներով, ժողովրդական բառ ու բանով՝ առածներով ու ասացվածքներով, դարձվածքներով ու թևավոր խոսքերով, առակներով ու հեքիաթներով:

Ժողովրդական ստեղծագործությունները ուսուցանվում են երկու հիմնական փուլերով՝ բովանդակության հաղորդմամբ և երևակայական կողմի բացահայտմամբ [3, 203]: Բովանդակության հաղորդումն առաջարկում ենք կատարել ժամանակակից ընկալման և յուրացման մեթոդներով, մասնավորապես՝ գործուն ընթերցանության ուղեցույցով և խճանկարով:

Գործուն ընթերցանության ուղեցույցի հեղինակը ամերիկացի մանկավարժ Դավիթ Վուդն է: Նա իր տեսակետները ներկայացրել է «Ինչպես են երեխաները մտածում և սովորում» աշխատության մեջ [6]: Ընթերցվող ժողովրդական ստեղծագործությունների առաջնային գաղափարները պարզելու նպատակով կազմվում են աշակերտական փոքր խմբեր: Տվյալ ուսումնասիրության մեջ ներկայացնում ենք 4-րդ դասարանի «Մայրենիի» դասագրքի «Ես այսպե՛ս ասեմ, դու այնպե՛ս հասկացիր» թեման [4, 83-102], որտեղ ընդգրկված են հեղինակային առակներ:

Թեմայի ուսուցման շրջանակներում կատարվում են հետևյալ քայլերը.

1. Համառոտ ներկայացվում է թեմայի վերնագիրը՝ ըստ ՎԱՍ-ի հեղինակած դարձվածաշատ պատմության [4, 83-102]: Աշակերտները հիշում են ժողովրդական ստեղծագործությունների այլաբանական բնույթի առանձնահատկությունները և պատրաստվում պարզելու նոր դասերի կարևոր տեղեկատվությունները և հայտնաբերելու հնարավոր այն որոգայթները, որոնք կարող են խոչընդոտել գաղափարի ըմբռնմանը; Առակների ընթերցանության ժամանակ աշակերտները հիմնականում դժվարանում են ընդհանուր եզրակացություններ կատարելիս: Այս դեպքում հաճախ ձևավորված խմբերում առկա են լինում տարակարծություններ, ուստի հանձնարարվում է ուշադրություն դարձնել հեղինակային արտահայտություններին և առակներին գուգորդվող պատկերազարդումներին, բառերի ուղիղ և փոխաբերական իմաստների կիրառություններին:

2. Կազմել գործուն ընթերցանության ուղեցույց՝ տվյալ դեպքում երևակայական պատկերների գրաֆիկական ուրվագիծ [5, 242].



Ա. Իսահակյանի հեղինակած «Արջն ու օձը» [4, 84] առակի ընթերցանությունից հետո առաջարկվում է ներկայացնել արջի և օձի ընկերական տեղեկատվական երկխոսություն՝ օգտվելով մանկական հանրագիտարանից: Այնուհետև ներկայացնել արջ և օջ հերոսների իրական կերպավորումները՝ պատասխանելով «Ինչպիսի՞ մարդկանց են մարմնավորում կենդանիները» հարցին: Ներկայացվում են տեսակետներ ընկերության և ընկերների մասին՝ կատարելով եզրակացություններ: Ստեղծագործության մասին ավելի հանգամանորեն մտածելու նպատակով հանձնարարվում է աշակերտներին ներկայացնել առածներ և ասացվածքներ ընկերության մասին, կազմել նախադասություններ **ընկեր, ընկերասիրություն, ընկերանալ, ընկերական** և նման բառերով: Դասի շրջանակներում

հատկապես հետաքրքիր է լինում **ընկեր** բառի ստուգաբանության պատմությունը:

Հրաչյա Աճառյանը վկայում է, որ **ընկեր** բառը կազմված է **ընդ** (*ընդամենը, ընդհանուր* և այլն) նախդրից և **կեր** արմատից և նշանակում է «միասին ուտող, հացակից, ճաշակից»: Բառը կազմվել է լատիներեն **companiono** բառի օրինակով, որ առաջացել էր գինվորական կյանքի մեջ [1, 128-129]: Աշակերտները, իմաստային կապեր հաստատելով նման կազմությամբ բառերի հետ, հասկանում են, որ նման եղանակով են կազմվել նաև **ընտանիք, ընկալել** և այլ բառեր:

3. Խմբային քննարկումներից հետո առաջադրվում է լրացված ուղեցույցները ներկայացնել դասարանին՝ որպես քննարկման արդյունքներ:

Աշխատանքի ավարտին աշակերտները հմտանում են գրավոր նյութերը տարբեր նպատակներով և արագություններով շարադրելու մեջ: Նրանք, ուշադիր լսելով տեղեկատվությունները, ընկերների հետ պարզում են տեքստի անհասկանալի մասերը՝ քննարկելով նյութը: Փոխգործուն ընթերցանության ուղեցույցի մեթոդն առավել արդյունավետ է լինում ընթերցանության դժվարություններ ունեցող աշակերտների համար: Ավելի հմուտները նրանց դերային հանձնարարություններ են տալիս և աշխատանքը ներկայացնում են յուրօրինակ բեմականացմամբ:

Առակների հաջորդական ուսուցումից հանգում ենք ինքնատիպ խճանկարի:

Առանձին-առանձին կարդալով յուրաքանչյուր առակ՝ աշակերտները դրանք ամբողջականացնում են որպես մեկ ընդհանուր առակի տարրեր՝ ստեղծագործելով նոր ընդհանրական առակ: 2018 թ. Վանաձոր քաղաքի Դ. Վարուժանի անվան թիվ 16 հիմնական դպրոցի 4-րդ դասարանի աշակերտները ներկայացրին 4 պատասառներ՝ իրենց ընթերցած առակների կերպարային համակարգով:

Նրանք պարզել էին առակներում ներկայացված թեմաներին առնչվող նյութերը և հաշվի առնելով իրենց գիտելիքները՝ ընտրել էին տարբեր բարդության առաջադրանքներ: Մեկը զբաղվում էր պաստառի նկարազարդմամբ, մյուսը՝ պաստառի նախագծմամբ, երրորդը բերում էր անհրաժեշտ պարագաները, իսկ չորրորդը առաձին գրառումներ էր կատարում տարբեր գրքերից՝ պաստառն ավելի բովանդակալից դարձնելու նպատակով: Աշխատանքի յուրաքանչյուր համակարգող ուներ իր ընկերը: Այսպես կազմվեցին պաստառներ՝ «Կենդանիների աշխարհում», «Մարդկանց աշխարհում», «Հնարամիտները», «Մովորի՛ր ուրիշներից» վերնագրերով:

Աշխատանքի ավարտից հետո կատարվեց վերախմբավորում, և յուրաքանչյուր նոր խումբ սկսեց բացատրել մյուսների կատարած աշխատանքները՝ համեմատելով և գնահատելով նրանց խոսքը: Դասին իբրև փորձագետներ նստած էին բարձր դասարանների աշակերտները, ծնողները և ուսուցիչները, որոնց հանձնարարվեց հայտնել տեսակետներ և կազմակերպել արտադասարանային քննարկումներ:

Այսպիսով աշակերտներն առնչվում ու ծանոթանում են ավելի լայնածավալ

նյութերի՝ յուրացման համար ընտրելով իրենց ընդունակություններին և նախասիրություններին համապատասխան աշխատանքներ: Ընթերցված ստեղծագործությունը յուրացնելու համար աջակցություն են ստանում իրենց ընկերներից: Եվ վերջապես ձեռք են բերում կարևոր տեղեկությունն ընտրելու և համադրելու հմտություն, քանի որ նրանք խմբի մնացած անդամների համար ուսուցչի դեր են կատարում:

Թեմաների ժամանակակից դասավանդման եղանակները զարգացնում են աշակերտների ստեղծագործական մտածողությունը, քանի որ նրանց կատարած աշխատանքի ժամանակ զարգանում է նրանց հետևող ու կազմակերպող ուսուցչի մտածողությունը, նա շարունակ զարմանում ու հիանում է իր աշակերտներով: Սովորեցնելով աշակերտներին ինչպես մտածել և դատողություններ անել՝ բացահայտվում են աշակերտների կարողություններն ու հնարավորությունները, ստեղծվում են միջառարկայական կապեր: Այսպես՝ Ռաֆայել Հայրապետյանի հեղինակած «Շախմատ» առակը սովորեցում է. «Որքան շատ սովորես, այնքան շատ կհամոզվես, որ դեռ շատ բան ունես սովորելու» [4, 100]: Աշակերտներին հանձնարարվում է հիշել իրենց խոսակցությունները շախմատի դասերին՝ կազմելով մանրապատումներ: Այնուհետև աշակերտների հետ քննարկվում են շախմատային բառերը, նշում նրանց իմաստային և կիրառական առանձնահատկությունները:

Այստեղ նույնպես կարևորվում է բառի բացատրությունը: Աշակերտները, ներքին վերլուծության ենթարկելով *շախմատ* բառը, ներկայացնում են դրա կազմությունը, հասկանում բուն բովանդակությունը:

Շարունակելով միջառարկայական կապերի անդրադարձը՝ այս դասին գուցա հեռ մաթեմատիկայի դասին մեկնաբանվում են թվական անունների կազմությունները, և հիմնական ուշադրությունը դարձնելով եռանիշ թվերի վրա՝ սովորում ենք դրանց ուղղագրությունը և ուղղախոսությունը:

Ստեղծագործական մտածողության զարգացման համար երբեմն կիրառում ենք անակնկալ բեմականացումներ: Այսպես Ա. Խնկոյանի հեղինակած «Ճպտուն ու մրջյունը» [4, 89] առակի դասավանդման ժամանակ աշակերտները բաժանվում են ճպտունների և մրջյունների և ըստ ժամանակի միավորների՝ կազմում են իրենց օրակարգը՝ այն ներկայացնելով նորաստեղծ ոտանավորներով ու երգերով: Այստեղ հատկապես հիշարժան են 2018 թ. աշակերտների կազմած ակրոստիքոս-հանելուկները:

**Մ**ան եմ գալիս ամբողջ օրը,  
**Ը**ռպե չունեմ ես դադար,  
**Ջ**ուր եմ խմում շատ զգույշ  
**Ց**ասամանի ծառի տակ  
**Ո**ւ աշխատում օրնիբուն՝  
**Ն**որ ամբարներ լցնելով:

**Ճ**ոճվում ու հրճվում ենք,  
**Պ**արում, երազում  
**Ո**ւ սպասում ենք անհոգ  
**Ռ**-ազմիկներին այն քաջ, որ կքշեն  
ձմեռը, ու չի լինի էլ ցուրտ

Առակների բովանդակության բացահայտման ժամանակ աշակերտները

հասկանում են, որ իրենք ազատ են և կաշկանդված չեն տվյալ առարկայի շրջանակներում, նրանք առակների մոտիվներով նկարագրողումներ են կատարում, գրքեր են կազմում, երգեր են կատարում և վերջապես հանգում են մտքի տրամաբանական ավարտի, որը մաթեմատիկայի դասավանդման մեթոդիկայի հիմքն է [2, 17]:

Առակների բեմականացման ժամանակ նրանք սովորում են ճիշտ խոսել՝ գիտակցելով խոսքի կառուցվածքը, լեզվական արտահայտության առանձնահատկությունները: Նման դասերի ժամանակ պետք է գնահատվի աշակերտի յուրաքանչյուր կատարած գործողություն խելամիտ քաջալերման եղանակով, սակայն իրական գնահատականը պետք է լինի վերջում՝ որպես ուշացած գնահատական: Աշակերտը պետք է իմանա, որ վերջնական պարզևատրումը կատարած աշխատանքի արդյունավետությունն ապացուցելուց հետո է միայն հնարավոր: Նման երկարաժամկետ նախագծերը տևում են շաբաթներ՝ կարևորելով գիտելիքների ձեռքբերման համար շարունակական ջանքեր գործադրելու արժեքը:

#### ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. **Ն. Աճառյան**, Հայերեն արմատական բառարան, Երևանի համալսարանի հրատարակչություն, Երևան, 1973, էջ 128-129:
2. **Մ. Բանտովա** և այլք, Տարրական դասարաններում մաթեմատիկայի դասավանդման մեթոդիկա, Լույս հրատարակչություն, Երևան, 1985, էջ 17:
3. **Ա. Տեր-Գրիգորյան**. Հայոց լեզվի մեթոդիկա, Երևան, «Լույս» հրատարակչություն, 1980, էջ 203:
4. **Կ. Թորոսյան, Վ. Սարգսյան, Ն. Խաչատրյան, Կ. Չիբուխյան**, Մայրենի 4, «Մանմար» հրատարակչություն, Երևան, 2015, էջ 83-102:
5. Կառուցողական կրթության հիմունքները և մեթոդները, Ձեռնարկ ուսուցիչների համար, «Տիգրան մեծ» հրատարակչություն, Երևան, 2004, էջ 242:
6. **David Wood**, How Children Think and Learn, <https://books.google.am/books?id=itq> (Հասանելի է 14. 07. 18 թ.):

## Развитие творческого мышления на уроках изучения басни

*Мелконян Роза*

### Резюме

**Ключевые слова:** начальные классы, ученик, народное творчество, руководство по активному чтению, мозаика

Учащиеся начальных классов наделены феноменальным творческим мышлением.

В изучении произведений народного творчества выделяем два основных этапа – сообщение содержания и открытие фантастической, воображаемой стороны. При изучении басни предлагаем сообщить содержание посредством современных методов восприятия и освоения, в частности, посредством руководства по активному чтению и мозаики.

Обучение материала состоит из следующих шагов:

- 1) краткое содержание названия темы;
- 2) создание практического руководства по чтению, в данном случае графической схемы воображаемых изображений;
- 3) предъявление доделанных руководств к классу как результаты групповых обсуждений.

Таким образом ученики принимают участие и знакомятся с более широким спектром материалов, выбирая работу, которая соответствует их способностям и предпочтениям. Они получают поддержку со стороны своих одноклассников, чтобы усвоить прочитанный материал. И наконец, они приобретают умение выбирать и сочетать важную информацию, поскольку они играют роль учителя для остальной части группы.

Для полного достижения поставленной цели объясняются слова, выявляются межпредметные связи, ставятся представления, в ходе которых они учатся говорить правильно, осознают структуру речи. В этом случае посредством умеренного поощрения оценивается каждое действие ученика.

## The Development of Creative Thinking in the Lessons of Learning about Fable

*Melkonyan Roza*

### Summary

**Key words:** *elementary grades, a pupil, folk literature, guide to effective reading, mosaic*

The pupils who attend elementary school are endowed with rare abilities of creative thinking.

Folk literature is taught in two main stages: by presenting the contents and disclosing the imaginary side. During the teaching of fable, we suggest that you should present the contents through modern perception and mastering methods, particularly with a guide to effective reading and mosaic.

Teaching the topic consists of the following steps:

- 1) general view of the title,
- 2) creating a practical reading guide, in particular, a graphic scheme of imaginary images,
- 3) presenting the completed guidelines to the class, as proceedings of group discussions.

Thus, pupils deal with and get acquainted with a wider range of materials choosing the type of work that fits their abilities and preferences. They get support from their peers, in order to assimilate the material that they have read. Finally, they acquire the skill of selecting and combining important information, as they play the role of a teacher for the rest of the group.

Explanation of words, interdisciplinary discoveries and performances are applied so as to achieve the aim of the methods fully, during which they learn to speak correctly, by understanding the structure of speech. In this case, the action performed by each student is evaluated by means of reasonable encouragement.